կայացնելով՝ խնդրել են ստորագրել և ուղարկել կոնֆէրանսին. Օրմանեանը քաջ գիտենալով այդ հեռագրից սպասուող հետեանքները՝ բացէ ի բաց մերժել է ստորագրել այդ հեռագիրը. ապա պատգամաւորութիւնը, առաջնորդութեամբ մի նշանաւոր հայի, որի անունը կտանք կարևոր դէպքում, յանուն ազգի ստիպմամբ պահանջել է նորանից ստորագրել և նոյն իսկ այդ առաջնորդը ինքն է տարել հեռագիրը հեռագրատուն։—Թող հերքեն Գօլոսեցիք՝ եթէ կարող են հերքել այս ճշմարտութիւնը։

Մայիսի 6-ին Թիֆլիսում տեղի ունեցաւ դերասան Գեղ. Միրզաեանի բեմական գործունէութեան 25 ամեայ յօբելեանը։ Հանդիսին խմբագրութեանս կողմից ներկայ էր և շնորհաւորեց մեր աշխատակից Վարդգէս Աղանեանցը։

Թիֆլիսում կազմւում է «Հայոց պատմական ընկերութիւն», որի կանոնադրութիւնը շուտով կառաջարկուի պատշաճաւոր իշխանութեան 'ի հաստատութիւն։

Գ. Էլբէն «Հորիզոնում» գուժում է, որ Բերլինում այս օրերս վախճանուել է յայտնի հայագէտ պրոֆ. Ֆինկը։ Հանգուցեալը մի ժամանակ Լ. Գեանջեցեանի հետ միասին խմբագրում էր «Հանդէս Հայագիտութեան» պարբերական եռամսեայ թերթը, որ դժբաղտաբար կարճատև գոյութիւն ունեցաւ։

Ապրիլի 7-ին տեղի ունեցաւ Ղուկասեան մրցակցաշխութեան հանդէսը։ Մրցանակի 500 ռուբլի գումարի կէսը յատկացուեց Սմբատ Տէր Աւետիքեանի «Սանահնի և Ղազախ գաւառի արձանագրութիւնները» անտիպ աշխատութեան և միւս կէսը Ասլան Շահնազարեանի «Զաքարէ և Իվանէ Երկարաբազուկների գործունէութիւնը, անտիպ աշխատութեան։ Թանգարանի վարչութիւնը այս տարի տպել է «Կիրակոս գանձակեցու պատմութիւնը», որ արժէ ընդամենը 30 կ։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Պետրոս Մոճուեանց.—Մամիկոնեան առիւծը, պօէմա. Ալէքսանդրապոլ 1909.

Московскій Городской народный унаверситетъ имени А. Л. Шанявскаго 1910—11 тк. г. Москва 1910.

„—„ Циклъ естественно-историческихъ наукъ.

Կիրակոսի Գանձակեցւոյ պատմութիւն Հայոց. հրատ. Ղուկասեան Թանգարանի, 1910, Թիֆլիս. 30 կ.

Տեղեկագիր Թիֆ. Վանաց ա. եկ. կրօնա-պատմ. Թանգարանի 1908 ապրիլ 5—1910 ապրիլ 5.

Համառօտ դաս. Հայ. եկեղեցու պատմութեան, Յովհ. ա. ք. Մարտիրոսեանի, 1910 Թիֆլիս, 50 կ.

Խմբագիր հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ